



«Այբ» կրթական հիմնադրամ
Երևան 0009, Կոռյունի 19ա
Հեռ.՝ +374 10 54 37 07, +374 98 54 37 07
info@ayb.am
www.foundation.ayb.am

Դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագրի վերապատրաստող Կրթության գերազանցության ազգային ծրագրում (ԿԳԱԾ)

«Այբ» կրթական հիմնադրամ

Աշխատանքի տեսակը՝ կես դրույք
Աշխատանքի սկիզբը՝ 20 մարտի, 2018
Աշխատանքի վայրը՝ Կոռյունի 19ա

Ծրագրի և աշխատանքի նկարագիր

Արարատյան բակավարժիատի դպրոցների ղեկավար կազմի մասնագիտական զարգացման ծրագիրը նոր, միջազգային որակին համապատասխան, մինչև 1 տարի տևողությամբ անվճար տեսական և գործնական դասընթացների շարք է, որը մշակույթ է «Այբ» կրթական հիմնադրամը Լոնդոնի համալսարանական քոլեջի Կրթության ինստիտուտի (UCL IOE) հետ համագործակցությամբ:

Ծրագրի նպատակն է զարգացնել մասնակիցների (ԱԲ-ի դպրոցների տնօրեններ և փոխտնօրեններ) գիտելիքները, հմտությունները և առավել մանրամասն ծանոթացնել նրանց ԱԲ ծրագրի ուսուցման մոտեցումներին ու առանձնահատկություններին՝ դրանով իսկ առավել արդյունավետ դարձնելով ծրագրի ներդրումը դպրոցներում:

Ծրագրի առաջին փուլի վերապատրաստումները կվարեն Լոնդոնի համալսարանական քոլեջի (ԼՀՔ) Կրթության ինստիտուտի ղեկավարների վերապատրաստման գծով մասնագետները: Այս փուլում նախատեսվում է ունենալ վերապատրաստողներ, ովքեր կօժանդակեն ԼՀՔ-ի մասնագետներին վերապատրաստումների ընթացքում:

Վերապատրաստումների հաջորդ փուլերին դպրոցների ղեկավար կազմի վերապատրաստումները հիմնականում կիրականացնեն տեղացի վերապատրաստողները՝ ԼՀՔ-ի մասնագետների օժանդակությամբ:

Ծրագիրը նախատեսում է 3-անգամյա դեմառդեմ հանդիպումներ, որոնք կմեկնարկեն 2018 թ. մայիսի 11-ին և կտևեն մինչև 2019 թ. ապրիլ: Առաջին դեմառդեմ հանդիպումների մասնակիցների թիվը չի գերազանցի 55-ը: Յուրաքանչյուր դեմառդեմ հանդիպման նախորդող մեկ-երկու օրվա ընթացքում նախատեսված են ԼՀՔ-ի մասնագետների ուղղորդիչ հանդիպումներ տեղացի վերապատրաստողների հետ:

Պահանջվող հմտություններ

- Հայաստանում կրթության որակի բարելավմանն ուղղված միջազգային նախաձեռնությանը միանալու և դրանում ակտիվ դերակատարություն ունենալու ցանկություն և պատրաստակամություն
- Առաջնորդության դասընթաց վարելու կարողություն՝ տարբեր փորձառություն ու գիտելիքներ ունեցող մասնակիցների համար
- Քուլչինգի և մենտորության հմտություններ՝ անհատների և խմբերի հետ աշխատելու համար
- Ծրագրի մասնակից դպրոցների տնօրենների վերապատրաստման կարիքներին և պահանջներին արձագանքելու ճկունություն, անհատների և խմբի կարիքներին և պահանջներին վերապատրաստման ծրագրերի համապատասխանեցման կարողություն
- Հայաստանում գործող կրթական օրենսդրության լավ իմացություն և ուսումնառության, ուսուցման և դպրոցներում առաջնորդությանն առնչվող միջազգային հետազոտությունների մասին տեղեկացվածություն
- Միջազգային ուսումնասիրություններն ու փորձառությունը հայկական կրթական համատեքստում կամ համակարգում կիրառելու և ներդնելու փորձ
- Արձագանք տրամադրելու և ստանալու կարողություն
- Ինքնաշահադրման և դիմացինին ոգևորելու կարողություն
- Ծրագրի մասնակիցների հետ փոխվստահության և փոխըմբռնման մթնոլորտ ձևավորելու կարողություն
- Մեծահասակների ուսումնառության յուրահատկությունների, ինչպես նաև փորձարարական և վերլուծական (*Reflective learning*) ուսումնառության կարևորության և յուրահատկությունների ընկալում
- Հուզական խելամտության (emotional intelligence) բարձր մակարդակ
- Լսելու ունակություն
- Թիմում աշխատելու կարողություն
- Փոփոխություններին արագ հարմարվելու ունակություն
- Անգլերեն և հայերեն գրավոր, ինչպես նաև բանավոր արդյունավետ հաղորդակցվելու զարգացած հմտություններ
- Համակարգչային հմտություններ և համակարգչից կանոնավոր կերպով օգտվելու հնարավորություն
- Կազմակերպչական հմտություններ
- Հուսալիություն

Դիմելու գործընթաց

Ներկայացված պահանջներին համապատասխանող թեկնածուները կարող են ուղարկել իրենց ինքնակենսագրականները և ծրագրին միանալու սեփական շարժառիթները ներկայացնող ուղեկցող նամակ (առավելագույնը 300 բառ) vacancy@ayb.am հասցեին: Խնդրում ենք նամակի թեմայի (subject) դաշտում պարտադիր նշել պաշտոնը, որի համար դիմում եք: Նախնական հավանություն ստացած թեկնածուները կհրավիրվեն հարցազրույցի:

Դիմելու վերջնաժամկետ՝ 10 մարտի, 2018

Մեր մասին

«Այբ» կրթական հիմնադրամը ստեղծվել է 2006 թվականին Նրանց կողմից, ովքեր իրենց ձեռքբերումները համարում են կրթության արդյունք և կամենում միասնական ներդրմամբ ստեղծել բարձրորակ կրթություն ապահովող համակարգեր: «Այբ» կրթական հիմնադրամի նպատակն է՝ ձևավորել սովորելու գերազանցության մշակույթ և աջակցել Հայաստանում կրթության զարգացմանը: «Այբ» հիմնադրամն իրականացնում է բազմաբնույթ գործունեություն հանրակրթության ոլորտում՝ մշակելով կրթական բարեփոխումների ծրագրեր, նախագծելով և հիմնելով օրինակելի կրթական միջավայրեր, որոնք խթան են ծառայում համակարգային փոփոխությունների համար:

Կրթության գերազանցության ազգային ծրագիր

2014 թվականին «Այբ» կրթական հիմնադրամը, համագործակցելով Քեմբրիջի համալսարանի Քեմբրիջի գնահատման և միջազգային կրթության կենտրոնի (Անգլիա) և Լոնդոնի համալսարանական քոլեջի (UCL, ԼՀՔ) Կրթության ինստիտուտի հետ (IoE), սկսեց տասնամյա լայնածավալ կրթական նախաձեռնություն, որի նպատակը Հայաստանում միջազգայնորեն մրցունակ այլընտրանքային դպրոցական կրթական ծրագիր և համաշխարհային դասավանդման լավագույն փորձով ու գիտելիքներով զինված ուսուցիչների համայնք ստեղծելն է, ինչը որոշիչ դեր կխաղա երկրի հանրակրթության համակարգի մրցունակության բարձրացման, երկարաժամկետ զարգացման և համընդհանուր առաջընթացի գործում:

Հիմնադրամի գործունեությանն ավելի մանրամասն կարող եք ծանոթանալ <https://foundation.ayb.am/> կայքից: